

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) հայտարարում է քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոն զբաղեցնելու համար

Քարտուղարության առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 84-4.2-2)

Քարտուղարության պետի հանձնարարությամբ մասնակցում է արխիվ հանձնված փաստաթղթերի հաշվառմանը և պահպանմանը, արխիվային փաստաթղթերի ապահովագրական ֆոնդի ստեղծման ու պահպանման աշխատանքներին, գործերի ամփոփ անվանակարգի կազմմանը: Իր լիազորությունների սահմաններում մեթոդական և գործնական օգնություն է ցույց տալիս հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումներին՝ Քարտուղարության արխիվ հանձնման ենթակա փաստաթղթերի հետ տարվող աշխատանքներում: Ստեղծում և կատարելագործում է արխիվի գիտատեղեկատու համակարգը, վարում է արխիվային ֆոնդի, գործերի և փաստաթղթերի հաշվառումը: Իր լիազորությունների շրջանակներում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- առնվազն միջնակարգ կրթություն,
- իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Դիմող ՀՀ քաղաքացիները Հանձնաժողովի աշխատակազմ (ք. Երևան, Իսահակյան 28) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- գրավոր դիմում (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը՝ բնօրինակի հետ միասին,
- աշխատանքային գրքույկի պատճենը (ունենալու դեպքում)՝ բնօրինակի հետ միասին,
- քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագրի պատճենը՝ բնօրինակի հետ միասին,
- արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին,
- մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,
- անձնագրի պատճենը՝ բնօրինակի հետ միասին:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 10<sup>00</sup>-ից մինչև 16<sup>00</sup>-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 25.09.2018 թ.: